# Հայոց հին պատմության գիտաժողովին կհաջորդեն սեմինարները

## *Մինչ նոր գիտաժողով*

ԳԱԱ պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի հոգեւոր հովանավորությամբ եւ «Վարդանանք» տեղեկատվական կենտրոնի աջակցությամբ նոյեմբերի 13–15-ը ինստիտուտի նիստերի դահլիճում կայացավ «Հայկական լեռնաշխարհը հայոց եւ համաշխարհային քաղաքակրթության բնօրրան» գիտաժողովը, որի ընթացքում քննարկվեցին հայոց հին պատմության կարեւորագույն հիմնահարցերը: Դրանց մեջ տեղ էին գտել Ուրարտու պետության էթնիկ խնդիրները, բասկերի երկրում հայկական ցեղանունները, հայ էթնոսի կազմավորման խնդիրը, Տայոց աշխարհը, մաշտոցյան այբուբենի կառուցվածքային առանձնահատկությունները, հայ ազգի ինքնության պահպանման հիմքերը, հայրենի երկրի բնագիտական էությունը եւ հայագիտության համար կարեւոր նշանակություն ունեցող այլ հարցեր: Նկատի ունենալով որոշ զեկուցումների լայնածավալ քննարկման անհրաժեշտությունը, գիտաժողովի կազմակերպիչները, որոնց ավելացել է նաեւ ճարտարապետության ազգային թանգարան–ինստիտուտը, սկսում են սեմինարների շարք, որոնք տեղի կունենան ամեն ուրբաթ ճարտարապետության թանգարան–ինստիտուտի սրահում: Երեկվա անդրանիկ սեմինարից առաջ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը նշեց, որ գիտաժողովում առաջ քաշված էթնիկ հիմք ունեցող հարցերը պահանջում են լիարժեք, համակողմանի վերլուծություն, ինչպես նաեւ հասարակական ու պետական ուշադրություն, քանի որ հայ ժողովրդի կազմավորման, հայոց պետականության, հայ էթնոսի ձեւավորման եւ հիմնարար մյուս հարցերի հստակեցումը վաղուց արդեն դարձել է հրատապ ու առաջնային: Հենց այդ խրթին հարցերի վրա են հիմնված արեւմտյան պատմագրության մեջ առկա թյուրըմբռնումներն ու խեղաթյուրումները, որ հաճախ միտումնավոր ու քաղաքականացված բնույթ են կրում: Ահա թե ինչու առանձնակի շեշտադրում են պահանջում հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի բնիկության հարցը, էթնիկ խնդիրները, որոնք մինչ օրս հավուր պատշաճի չեն մատուցվել: Հայոց պատմության հին շրջանի հիմնահարցերը նոր լույսի տակ կմեկնաբանվեն «Պատմական ժողովրդագրություն» վերնագրով հաջորդ համաժողովում, որ տեղի կունենա մայիսին, իսկ դրանից հետո, աշնանը կայանալիք համաժողովում կլսվեն վաղ միջնադարյան շրջանին առնչվող հարցերը:

Մինչ այդ մասնագետներին հնարավորություն կտրվի իրենց ձեռքի տակ ունեցած գիտական նյութերը քննարկել ամեն ուրբաթ կայանալիք սեմինարներում: Առաջին սեմինարի թեման նվիրված էր հայոց այբուբենի կառուցվածքային առանձնահատկություններին, որի վերաբերյալ լսվեցին Սամվել Գրիգորյանի եւ Վահան Սարգսյանի զեկուցումները:

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ սեպտեմբերին մեծ հանդիսավորությամբ բացված հայագիտական առաջին համաժողովում հնչած գեղեցիկ խոստումները մնացել են օդից առկախ: Հայագիտական միջազգային կենտրոն, հիմնադրամ ու ինտերնետային հանդես ստեղծելու գաղափարները թերեւս կմնան սոսկ այդպիսիք, քանի որ հայագիտության համար անհրաժեշտ ֆինանսական ու շենքային խնդիրները մեզանում միշտ էլ բուռն կրքերի ու վիճաբանությունների տեղիք են տալիս: «Հայագիտական հանդեսի ու հիմնադրամի ստեղծումը ուշանում է», ասաց պրն Մելքոնյանը: Հասկանալի է, որ հայագիտական միջազգային կենտրոնի ստեղծումն էլ ավելի պիտի ուշանա....

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ,